

ԿԱՐԳ  
ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԻՐԱՅՄԱՆ  
(ՏԱՐԱԾՄԱՆ) ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձ) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում չեկերի, վճարային քարտերի, էլեկտրոնային փողերի (այսուհետ՝ վճարային գործիք) սպասարկման (բացառությամբ երրորդ անձանց օգտին վճարումների ընդունման և կատարման հետ կապված) և (կամ) իրացման (տարածման) ծառայությունների մատուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացնելու ձևը և պայմանները:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:
3. Սույն կարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, դրանց տարածքային ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերով վճարային գործիքների տարածման և (կամ) սպասարկման ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող անձանց վրա:
4. Սույն կարգը չի տարածվում նաև այն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք ունեն վճարային գործիքների տարածման և (կամ) սպասարկման վերաբերյալ համապատասխան պայմանագիր սույն գլխի 3-րդ կետով սահմանված անձանց հետ:

ԳԼՈՒԽ 2. ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԵՎ (ԿԱՄ) ԻՐԱՅՆՈՂ ԱՆՁԱՆՑ  
ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

5. Վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է այլ ֆինանսական կազմակերպության կողմից թողարկված վճարային գործիքի սպասարկումը և (կամ) իրացումը (տարածումը) Կենտրոնական բանկին տեղեկացնելու նպատակով ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝
  - 5.1 վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձի վերաբերյալ տեղեկատվություն,

- 5.2 տարածվող և (կամ) սպասարկվող վճարային գործիքի վերաբերյալ տեղեկատվություն,
- 5.3 վճարային գործիքի թողարկման, սպասարկման, ինչպես նաև նրանով առաջացած դրամական պահանջների կատարման վերաբերյալ տեղեկատվություն,
- 5.4 թողարկողի և վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձի միջև կնքած պայամնագրի պատճենը:
6. Վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառի՝
  - 6.1 վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձի լրիվ անվանումը (իրավաբանական անձի պարագայում՝ նաև կազմակերպական-իրավական ձևը), գտնվելու վայրը, իրականացվող գործունեությունը, ղեկավարի անվանումը, հաղորդակցման միջոցները (հեռախոս, էլեկտրոնային հասցե, ֆաքս և այլ),
  - 6.2 պետական գրանցման (հաշվառման ) վկայականի պատճենը:
7. Տարածվող և (կամ) սպասարկվող վճարային գործիքի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառի՝
  - 7.1 տարածման և (կամ) սպասարկման համար նախատեսված վճարային գործիքի անվանումը, իրականացվող գործունեության տեսակը (սպասարկում և (կամ) իրացում),
  - 7.2 տեղեկանք վճարային գործիք թողարկող կազմակերպության վերաբերյալ, ներառված թողարկողի լրիվ անվանումը (նաև կազմակերպական-իրավական ձևը), գտնվելու վայրը, ղեկավարի անվանումը, հաղորդակցման միջոցները (հեռախոս, էլեկտրոնային հասցե, ֆաքս և այլ),
  - 7.3 վճարային գործիք թողարկողի համապատասխան թույլտվության կամ վճարային գործիք թողարկողի երկրի օրենսդրությամբ սահմանված թողարկման իրավասությունը հավաստող փաստաթղթի պատճենը,
  - 7.4 իրացման և (կամ) սպասարկման ենթակա վճարային գործիքի օրինակելի ձևերը կամ նրանց պատճենը կամ վճարային գործիքը նկարագրող տեղեկատվություն:
8. Վճարային գործիքի թողարկման, սպասարկման, ինչպես նաև նրանով առաջացած դրամական պահանջների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառի՝
  - 8.1 վճարային գործիքի թողարկման, սպասարկման և տարածման հաշվարկների իրականացման կանոնները,
  - 8.2 տեղեկանք վճարային գործիքով հաշվարկների իրականացման ժամանակ կիրառվող անվտանգության համակարգի և տեղեկատվության ապահովման վերաբերյալ:
9. Սույն կարգում նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային եղանակով՝ լինեն համարակալված, դրոշմակնքված, վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձի ղեկավարի կողմից ստորագրված, բացառությամբ 8-րդ կետում նշված փաստաթղթերի, որոնք կարող են ներկայացվել էլեկտրոնային կրիչով՝ կցելով էլեկտրոնային կրիչով ներկայացվող փաստաթղթերի ցանկը:
10. Վճարային գործիք տարածող և (կամ) սպասարկող անձը, սույն կարգով սահմանված տեղեկատվությունում տեղի ունեցած փոփոխությունների և (կամ) լրացումների վերաբերյալ պետք է փոփոխությունը և (կամ) լրացումը կատարելուց հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում գրավոր տեղեկացնի Կենտրոնական բանկին: